Աննա Բաբուշյան

Մտորումներ

Ու թափառումները մի օր կգտնեն իրենց հասցեատերերին, երկինքը վառ արշալույսներ կծնի, ծաղիկները կծաղկեն՝հանց երջանկության աչուկներ, սեր կբուրի ամեն թուփ ու ծառից: Անձրևն ու արևը կհամբուրվեն, ու իսկույն ծիածան կծնվի: Երկինքը կշառագունի ամոթխած աղջնակի նման, երեկոն վարդագույն թևերը կփռի օրվա վրա: Ես կխնդրեմ օրվան, որ մի քիչ երկարի, որ թափառումները կարողանան երկար փաթաթվել կարոտներին: Օրը կվերջանա ու կսկսվի աստղազարդ երկնքի շուրջպարը, այնտեղ այնքա՜ն աստղեր կան, որ եթե համախմբվեն արևն իսկույն կկուրանա... Քո աստղերն էլ ցիրուցան եղան աշխարհով մեկ ու դարձան մարմրող ճրագներ: Երանի կարողանայիր համատեղել այդ ճրագները, որ քո լույսը բռնկվեր... Եկեք բոլորս համատեղենք մեր մարմրող ճրագները, որ հայ ազգի լույսը պայծառ շողա...

21.02.2024

ԱԽՈՒՐՅԱՆ